

ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՎՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ակադեմիկոս Գեվորգ ԶԱՀՈՒԿՅԱՆԻ
լուսավոր հիշատակին

Գրավոր մշակույթի զարգացումը գարեր ու հազարամյակներ տևող գործընթաց է, որում այն կրող ժողովրդի մոտ ձևավորվում, արմատավորվում և զարգանում է գրային մտածողությունը: Մաշտոցյան գրերով սկզբնավորված ոսկեդարյան գրականությունը, անառարկելիորեն, բարձր զարգացման հասած գրային մտածողության արգասիք է, ինչից կարելի է ենթադրել նախամաշտոցյան Հայաստանում գրավոր մշակույթի զարգացման բազմադարյան ընթացք: Որպեսզի այս միտքը չհնչի որպես զուտ տեսական եզրահանգում, փորձենք դիտարկել, թե ինչ գրեր են կիրառվել, գրավոր մշակույթը ինչպիսի զարգացում է ապրել նախամաշտոցյան Հայաստանում:

Նախամաշտոցյան Հայաստանի դպրություն մասին հնագիտական պեղումների և պահպանված մատենագրական բազմաթիվ հաղորդումների շնորհիվ այսօր ունենք հսկայական փաստական նյութ: Ք. ա. V-III հազարամյակներում Հայկական լեռնաշխարհում ձևավորվում է պատկերազրույթը, որն իր արտահայտությունն է գտնում ինչպես ժայռապատկերների, այնպես էլ զանազան իրերի վրա¹: Ք. ա. III հազարամյակում պատկերազրույթի զարգացմամբ և պարզեցմամբ ստեղծվում է գծային գրերի մի համակարգ (բաղկացած 400-500 նշաններից), որը կիրառվում է մինչև Ք. ա. I հազ. սկիզբը: Այս համակարգով կատարված շուրջ 300 արձանագրություններ են գտնվել Հայաստանի տասից ավելի հնավայրերից: Դրանք գեոևս վերծանված չեն. անհասկանալի է մնում գրություն ուղղությունը²:

Ք. ա. XV-VIII դդ. Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Եփրատի հովտում, կիրառվում են խեթալուվիական հիերոգլիֆները՝ գրված լուվիե-

¹ Հայկական լեռնաշխարհի պատկերազրույթյան զարգացման նախնական փուլերի մասին տես Ա. Մ ո վ ս ի ս յ ա ն, Հայկական մեհենագրություն, Երևան, 2003, էջ 14-19: Վաղ բրոնզի գարաշրջանում Հայկական լեռնաշխարհում պատկերազրույթյան օրինակները տես Հ. Մ ա ռ տ ի ը ո ս յ ա ն, Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Երևան, 1973, էջ 68-70, աղ. XXIII, Թ. Ч у б и н и - ш в и л и, К древней истории Южного Кавказа, Тбилиси, 1971, табл. XXVII, А. G. S a g o n a, The Caucasian Region in the Early Bronze Age, Part III, Oxford, 1984, նկ. 115-124, С. M a r r o, La culture du Haut-Euphrate au Bronze ancien. Essai d'interprétation à partir de la ceramique peinte de Keban (Turquie), "Varia Anatolica", VIII, Paris, 1997, pl.-86-92, P. de M i r o s c h e d j i, La ceramique de Khirbet Kerak en Syro-Palestine: Etat de la question, "Varia Anatolica", XI (Chronologies des pays du Caucase et de l'Euphrate aux IV^e-III^e millénaires), Paris, 2000, p. 275, im. 4 և այլն:

² Ա. Մ ո վ ս ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 30-46:

րենով³ (Հայերենին մոտ ազգակից հնդեվրոպական մի լեզվով. ժամանակին ենթադրվում էր, որ դա Հայերենն է⁴): Գրային համակարգը բաղկացած է եղել շուրջ 500 հիերոգլիֆներից, ունեցել զրուսթյան բուստրոֆեզոն (ամեն հաջորդ առողը նախորդին հակառակ) ուղղութիւն, կիրառվել է Փոքր Ասիայի, Սիրիայի և Հայկական լեռնաշխարհի արևմտյան տարածքներում⁵: Վանի թագավորութունում (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) գործածվել են երեք գրային համակարգեր, որոնցից մեկը բնիկ տեղական մեհենագրութունն է, մյուս երկուսը սեպագիր են ներմուծված Միջագետքից⁶: Տեղական (վանյան / բիայնական / ուրարտական) մեհենագրութունը բաղկացած է շուրջ 300 մեհենանշաններից (հիերոգլիֆներից), որոնք գրվել են ալիք ձևի և վերից վար ուղղութիւններով: Այս համակարգը Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս որևէ տեղ Հայտնի չէ: Մինչ օրս Հայտնաբերվել են շուրջ 1500 արձանագրութուններ և մենանշաններ⁷:

³ Դրանք Հայտնաբերվել են Ծովքի հնավայրերից (H. G. G u t e r b o c k, Hittite Hieroglyphic Seal Impressions from Korucutepe – “Journal of Near Eastern Studies”, vol. 32, 1973, N 1-2 (January-April), p. 135-147, աղ. 3-5), Մելիդ-Թեգարամայի տարածքից (տե՛ս H. T. B o s s e r t, Altanatolien, Berlin, 1942, S. 67-70, 181-190, նկ. 763-795, P. M e r i g g i, Manuale di eteo geroglifico, II, Roma, 1975, NN 97-119, J. D. H a w k i n s, Corpus of Hieroglyphic Luwian Inscriptions, vol. 1, Inscriptions of the Iron Age, Berlin-New York, 2000, p. 282-329, աղ. 133-164), Կոմմոնիս-Կոմմագենեից (P. M e r i g g i, նշվ. աշխ., NN 124-131, J. D. H a w k i n s, նշվ. աշխ., էջ 334-360): Տե՛ս նաև Ա. Ե. Մ ո վ ս ի ս յ ա ն, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003, էջ 50-61, 282-321:

⁴ Տե՛ս H. J e n s e n, Hittiter und Armenier, Strassburg, 1898 աշխատութունը, որում ի մի են բերված այդ ժամանակ Հայտնի ընդամենը 92 հիերոգլիֆներ: Թեպետ հետագայում հարցը ստացավ այլ լուծում, կարծում ենք ավելորդ չի լինի մեկ անգամ ևս ականավոր դիտականի տեսակետին անդրադառնալը:

⁵ Գրային համակարգի և դրա ուսումնասիրության պատմութունը՝ Համապատասխան գրականության հղումներով տե՛ս H. J e n s e n, Die Schrift in Vergangenheit und Gegenwart, Berlin, 1958, S. 133-141, E. L a r o c h e, Les Hieroglyphes Hittites, Paris, 1960, D. D i r i n g e r, Writing, London, 1962, p. 66-69, Դ. Դ и р и н г е р. Алфавит. М., 1963, с. 118-123; И. М. Դ у н а е в с к а я. Язык хеттских иероглифов. М., 1969, И. Ф р и д р и х. История письма. М., 1979, с. 83-85, И. Е. Г е л ь б. Опыт изучения письма. М., 1982, с. 86-88, А. В. К о с я н. Лувийские царства Малой Азии и прилегающих областей. Ереван, 1994, с. 6-7, 106-107, Н. С. M e l c h e r t. Anatolian Hieroglyphs – In: “The World’s Writing Systems” (ed. by P. T. Daniels and W. Bright), New York-Oxford, 1996, p. 120-124 և այլն:

⁶ Սեպագրության ծագման ու զարգացման վերաբերյալ կա հսկայածավալ գրականութիւն. Համաշխարհային նշանակության այդ երևութիւն անդրադարձել են և՛ գրերի մասին ընդհանրացնող աշխատութիւններում, և՛ նվիրվել են հատուկ ուսումնասիրութիւններ. տե՛ս, օրինակ, G. A. B a r t o n, The Origin and Development of Babylonian Writing. – “Beitrage zur Assyriologie”, Bd. IX, 1913, Զ. Լ ո ս և Կ ո տ և ա, Գրի զարգացումը, Երևան, 1955, էջ 38-57, E. C h i e r a, They wrote on clay, Chicago, 1957, H. J e n s e n, նշվ. աշխ., էջ 74-88, I. J. G e l b, Von der Keilschrift zum Alphabet, Stuttgart, 1958, D. D i r i n g e r, նշվ. աշխ., էջ 35-46, Դ. Դ и р и н г е р, նշվ. աշխ., էջ 59-77, В. А. И с т р и н. Возникновение и развитие письма, М., 1965, с. 187-198, R. L a b a t, Manuel d’epigraphie akkadienne, Paris, 1976, И. Ф р и д р и х, նշվ. աշխ., էջ 83-85, А. О п п е н х е й м. Древняя Месопотамия. М., 1990, с. 181-228, P. M i c h a l o w s k i, Mesopotamian Cuneiform – In: “The World’s Writing Systems” (ed. by P. T. Daniels and W. Bright), New York-Oxford, 1996, p. 33-72 և դրանցում վկայակոչված գրականութիւնը:

⁷ Մանրամասն տե՛ս Ա. Ե. Մ ո վ ս ի ս յ ա ն, Հայկական մեհենագրութիւն, էջ 46-126, գրականության հղումները՝ էջ 49-63, ավելի քան 40 հնավայրերի քարտեզը էջ 50, արձանագրութիւնների և մենանշանների դիվանը՝ էջ 189-269 (Հավելված Բ):

Վանի թագավորությունում լայն կիրառություն են ունեցել սեպագիր համակարգերը: Սարգուրի I արքայի օրոք (Ք. ա. մոտ 840–825 թթ.) կանգնեցվել են ասորեստանյան սեպագրով (շուրջ 600 նշան՝ ձախից աջ գրություն) և ասուրերենով գրված արձանագրություններ: Այդ արքայից հետո ասուրերենով բնագրերը հանդիպում են Բիայնիլի-Ուրարտուկի արքաների երկլեզու կոթողներում, ինչպես նաև Արգինի-Մուսասիրում⁸: Ուշադրության է արժանի այն հանդամանքը, որ բիայնական տիրակալների թողած ասուրերեն արձանագրություններում կիրառված են որոշակի թվով նշաններ, որոնք չեն հանդիպում տեղական (բիայնական) սեպագիր հուշարձաններում⁹:

Իշպուհի արքայի օրոք (Ք. ա. մոտ 825–810 թթ.) միջագետքյան սեպագրության բարեփոխմամբ ստեղծվեց տեղական (բիայնական կամ ուրարտական) սեպագրային համակարգը (ձախից աջ գրություն), որով մեզ են հասել շուրջ 600 մեծ ու փոքր արձանագրություններ¹⁰: Իշպուհիի օ-

⁸ C. F. Lehmann - Haupt, Materialien zur alteren Geschichte Armeniens und Mesopotamiens, Abhandlungen der Koniglichen Gesellschaft der Wissenschaften zu Gottingen, Philologisch-historische Klasse, Neue Folge, Band IX, N 3, Berlin, 1907, S. 63, F. Thureau - Danguin, Une relation de la huitieme campagne de Sargon (714 av. J.-C.), Paris, 1912, p. XII, И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту. — "Вестник древней истории" (далее — ВДИ), 1951, N 2-4, N 48, Г. А. Меликиши. Урартские клинообразные надписи. М., 1960, с. 117-118, 125-131, 323-327, R. M. Boehmer, Zur Stelle von Topzava. — "Baghdader Mitteilungen", Bd. 10, 1979, S. 50-51, աղ. 12, Ն. Վարադյոզյան, Ուրարտական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին. — Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, 1, Երևան, 1981, էջ 39-40, M. Salvini, Eine vergessene Felsinschrift mit einem assyrischen Opfertext, Societies and Languages of the Ancient Near East (Studies in honour of I. M. Diakonoff), Warminster, 1982, S. 327-332, L. Vandenberg, L. de Meeyer, Urartu. Een vergeten cultuur uit het bergland Armenie, Gent, 1982-1983, p. 223, I. M. Diakonoff, On some new trends in Urartian philology and some new Urartian texts, AMI, Bd. 22, 1989, p. 93, B. Andreev - Salvini, M. Salvini, The Urartian Rock Inscriptions of Razliq and Našteban (East Azerbaijan, Iran), SMEA, 1999, fasc. XLI / 1, p. 21, Н. В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, с. 9-12, 25-30, 137-139, 289-294, B. Andreev - Salvini, M. Salvini, The Bilingual Stele of Rusa I from Movana (West-Azerbaijan, Iran), SMEA, 2002, fasc. XLIV / 1, p. 5-66 և այլն: Տե՛ս նաև Ա. Ե. Մոսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 62-69 (ասուրա-բարելական սեպագրերի նշանացանկը՝ էջ 322-368):

⁹ Այդ նշանները (առանձնացված հատուկ պայմանանշանով) տե՛ս Г. А. Меликиши, նշվ. աշխ., էջ 36-44:

¹⁰ Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների ուսումնասիրության պատմությունը գրականության հանգամանակի վկայակոչումներով, տե՛ս Б. Б. Пипотровски. Ванское царство (Урарту). М., 1959, с. 7-26, Գ. Բ. Ջառնկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 417-445, М. Л. Хачикян. Хурритский и урартский языки. Ереван, 1985, с. 10-14, 135-137, M. Salvini, Geschichte und Kultur der urartäer, Darmstadt, 1995, S. 5-14, մատենագիտական ցանկը՝ S. 211-238, Ն. Վարադյոզյան, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում). — Հայկական լեռնաշխարհի սեպագիր աղբյուրներում, հատ. I, գիրք 1, Երևան, 1998, էջ 7-10 և այլն: Մինչ այժմ հրատարակված արձանագրությունների ժողովածուներն են՝ A. H. Sacye, The cuneiform inscriptions of Van. — "Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland", London, 1882, XIV, N 3-4 (լրացումները լույս են տեսել. — "Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland" հանդեսի էջերում 1888-1932 թվերի ընթացքում), J. Sandalgiann, Les inscriptions cuneiformes urartiques, Venise, 1900 (լրացումները՝ «Հանդէս Ամսորեայ»-ի 1913

րոք կատարվեց իր ընդգրկմամբ և որակով հայաստանյան մինչմաշտոցյան իրականության մեծագույն գրային բարեփոխումը, որի էությունը հետևյալն է: Ասուրաբաբելոնյան սեպագրությունը բազկացած էր շուրջ 600 նշանից, որոնցից յուրաքանչյուրն ուներ մի քանի, երբեմն 10-ից ավելի տարբեր ընթերցում: Ընդհանուր առմամբ, արտահայտվում էին շուրջ 3000 վանկ և բառ: Բիայնական սեպագրությունը վերցրեց շուրջ 200 նշան, որոնք հիմնականում ունեին մեկ ընթերցում և հազվադեպ էին հանդիպում երկու կամ երեք նշանակություններով: Բիայնական կոթողային ուճի սեպանշանները կառուցվածքով գրեթե նույննում են նոր ասուրական նշաններին, ինչի հիման վրա էլ ընդունված է կարծել, թե այդ ոճը փոխառվել է Միջագետքից նոր ասուրական ժամանակաշրջանում: Տարբերությունը, հիմնականում, նշանների արտաքին տեսքի մեջ է: Ասուրական սեպանշանները մեխեր էին հիշեցնում, մինչդեռ բիայնական կոթողայինում եռանկյունիներ էին, և եթե միջագետքյանում նշաններն ունեին հատումներ, ապա բիայնականում հատվող գծիկը փոխարինվում էր երկու նոր սեպերով: Որոշ դեպքերում թեք սեպիկները վերածվում են հորիզոնականի և ընդհակառակը: Մի քանի նշաններ հանգես են դալիս ասուրաբաբելոնյան սեպագրության մեջ չվկայված նշանակություններով¹¹:

Դեռևս անորոշ է մնում Ք. ա. VI դարից մինչև քրիստոնեություն ընդունումն ընկած ժամանակամիջոցում մեր մեհենագրության ճակատագրի հարցը: Ըստ Հ. Մարտիրոսյանի «Այն չի բավարարում զարգացող երիտասարդ պետականության և համապատասխան դադափարաբանության պահանջները: Այդ պատճառով հեթանոսական Հայաստանում լայնորեն օգտագործվում են օտարազգի հնչյունային դրեր... Գաղափարագրությունը շարունակում է հարատևել մասնավորապես մեհենաներում՝ իբրև կրոնական-հմայական գրչություն¹²»:

Նյութական վկայությունների բացակայության հետևանքով այսօր մեզ հայտնի է, թե հետբիայնական դարաշրջանում հայկական մեհենագրու-

թ. Համարներում), Corpus Inscriptionum Chaldicarum (In Verbindung mit F. B a g e l und F. S c h a c h e r m e y r herausgegeben von C. F. Lehmann-Haupt), I-II, Berlin und Leipzig, 1928-1935 (որը Կ. Ֆ. Լեհման-Հաուպտի մահվան պատճառով մնաց անավարտ), F. W. K ö n i g, Handbuch der chaldischen Inschriften, I-II, Graz, 1955-1957, Դ. Ա. Մեևիկիշևի և Ի. Նշվաշի. (լրացումները՝ Դ. Ա. Մեևիկիշևի և Ի. Նշվաշի. Урартские клинообразные надписи. — ВДИ, 1971, N 3-4), Н. В. А р у т ю н я н. Նշվաշի:

¹¹ Գրային այս բարեփոխման մասին տե՛ս Դ. Ա. Մեևիկիշևի և Ի. Նշվաշի., էջ 33-35, Հ. Բ. Ա. Մ. Ն., Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 399-402:

¹² Հ. Ա. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Երևան, 1973, էջ 69: Դատելով մատենագրական տեղեկություններից, սակայն, կարելի է եզրակացնել, որ հայալեզու նշանագրերը նախաքրիստոնեական Հայաստանում ունեցել են ավելի լայն կիրառություն: Այդ են վկայում Փիլոստրատոսի տեղեկությունը Արշակ արքայի (I դար) նվիրաբերած հայագիր ոսկյա ժանյակի մասին (տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 619-620), Հիպոլիտիսի 234-235 թթ. գրված «ժամանակագրության» մեջ հայերի նշվելը սեփական գպրություն ունեցող ժողովուրդների շարքում (նույն տեղում, էջ 621), Ագաթանգեղոսի հաղորդումները նշանագրության և նախաքրիստոնեական Հայաստանում գպրության աստծո Տիրի պաշտամունքի վերաբերյալ (Ա դ ա թ ա ն դ ե ղ ո ս, 12, Ը, 99, ՃԸ, 778), Մովսես Խորենացու հաղորդումը II-III դարերում Դարանաղյաց Անի ամրոցում մեհենագրական պատմագրության արխիվի մասին, որից ասորի մատենագիր Բարդաճանը (Բար Դայսանը) թարգմանություններ է կատարել ասորերեն ու հունարեն (Խորենացի, Բ, ԿԶ) և այլն:

յունն ինչ դարգացում է ունեցել, հասնել է այբուբենի, թե ոչ: Հավանական է ենթադրելը, որ այնուամենայնիվ չի հանգել այբուբենի, որի պատճառը կարող էր լինել քրմության կողմից սրբազան ավանգույթին հավատարիմ մնալը (ինչպես գա եղավ եգիպտական հիերոգլիֆիկայի պարագայում): Քրիստոնեությունից հետո մեհենագրերը շարունակեցին կիրառվել հայ իրականությունում մեջ հմայագրերի, վարպետների նշանների, գաղափարագիր-նշանագրերի («նշանագիրք իմաստնոց» ցանկերը միջնադարյան մատյաններում, իմաստակիր նշանները կիրառական արվեստում) և այլ տեսքով¹²:

Վանի թագավորության անկումից մինչև քրիստոնեության ընդունումը Հայաստանում գործածվում են այբբենական գրային համակարգերը (ի տարբերություն նախկինում գործածված բառային ու վանկային համակարգերի): Դրանցից առավել լայն տարածում գտավ հունարենը՝ իր գրահամակարգով (ձախից աչ գրություն, 24 տառ)¹⁴, որը կիրառվում է Ք. ա. III դարից սկսած, իսկ քրիստոնեության պետական կրոն հռչակումից հետո ավելի լայնորեն գործածվում է, հատկապես, կրոնական քարոզչության նպատակով¹⁵:

¹² Մեհենանշանների քրիստոնեական դարաշրջանում ունեցած դրսևորումների մասին տե՛ս Ա. Մ ո վ ս ի ս յ ա ն, Հայկական մեհենագրություն, էջ 129-142:

¹⁴ Հունական այբուբենի ծագման ու զարգացման մասին կա հսկայածավալ գրականություն. տե՛ս, օրինակ, Չ. Լ ո ո կ ո տ կ ա, նշվ. աշխ., էջ 167-175, Н. Jensen, նշվ. աշխ., էջ 422-442, D. Diringer, նշվ. աշխ., էջ 149-164, Д. Дириггер, նշվ. աշխ., էջ 522-536, В. А. Истрин, նշվ. աշխ., էջ 332-351, И. Гельб, նշվ. աշխ., էջ 171-177, И. Фридрих, նշվ. աշխ., էջ 127-133 (նաև գրանցում հղված գրականությունը):

¹⁵ Լախամաշտոցյան Հայաստանի հունագիր հուշարձանների հրատարակումները տե՛ս K. Humann und O. Puschtein, Reisen in Kleinasien und Nordsyrien, Textband, Berlin, 1890, S. 232-352, P. G. Jerphanion, P. L. Jalabert, Inscriptions d'Asie Mineure (Pont, Cappadoce, Cilice), "Mélanges de la Faculté Orientale de l'Université Saint-Joseph", III, Fasc. I, Beyrouth, 1908, p. 470 (N 59), C. F. Lehmann-Haupt, Eine griechische Inschrift, "Klio", VIII, 1908, S. 497-520, C. F. Lehmann-Haupt, Armenien Einst und Jetzt, I, Berlin und Leipzig, 1910, S. 410-421, М. И. Ростовцев, Апаранская греческая надпись царя Тиридата. (Анийская серия, N 6), СПб., 1911, с. 1-32, L. Jalabert, R. Moutard, Inscriptions grecques et latines de la Syrie, t. I, Commagene et Cyrrestique, Paris, 1929, p. 9-60, Б. Лунин, Археологические находки 1935-1936 гг. в окрестностях станиц Тульской и Даховской близ Майкопа. — ВДИ, 1939, N 3, с. 220-223, А. И. Болтунов, Греческие надписи Армавира. — ВОН, 1942, N 1-2, 4, Մ ա ն ա ն դ յ ա ն, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսարանություն, Երևան, 1946 (Հայերեն և ռուսերեն), К. В. Тревер, Надпись о построении армянской крепости Гарни. Л., 1949, Г. И. Гоян, 2000 лет армянского театра, т. I, Театр древней Армении. М., 1952, с. 377-388, К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э. — IV в. н. э.). М. — Л., 1953, с. 104-161, 174-211, 224-261, 271-288, Г. Х. Саркисян, Тигранакерт. М., 1960, с. 76-86, Գ. իս. Մ ա ռ գ ս յ ա ն, Նախամեսրոպյան շրջանի հայ պատմագրությունը. — ՊՐՀ, 1969, №1, էջ 112-113, Ա. Ա. Մ ա ռ ի ռ ո ս յ ա ն, Հայաստանը և առաջին Սասանյանները. — ՊՐՀ, 1975, N 3, էջ 192, E. Lipinski, Studies in aramaic inscriptions and onomastics, Leuven, 1975, p. 197-208, Б. Н. Аракелян, Очерки по истории искусства Древней Армении (VI в. до н. э. - III в. н. э.). Ереван, 1976, с. 89-100, 4, Մ ա ն ա ն դ յ ա ն, Երկեր, Հ. Բ, Երևան, 1978, էջ 124-126, Հայ ժողովրդի պատմության քրիստոմատիա, էջ 359-363 (թարգմանությունը Ս. Գ. Կրկյաշարյանի) և այլն:

Հայկական գրամաների հունարեն մակագրությունները՝ ՀԺՊ (ակադ. հրատ.), Հ. I, էջ 692-698 (բաժնի հեղինակ՝ իս. Մ ու շ հ դ յ ա ն), P. Z. Bedoukian, Coinage of the

Հին Առաջավոր Ասիայում առավել տարածված գրահամակարգերից մեկն արամեական այբուբենն է (22 բաղաձայն, աջից ձախ գրություն)¹⁶, որը Ք. ա. II-ից Ք. Յ. II դարերում կիրառվում էր նաև Հայկական լեռնաշխարհում¹⁷:

Artaxiads of Armenia, London, 1978 (Հատկապես էջ 42-43-ում), *Խ. Մ ու չ ե ղ յ ա ն*, Հայաստանի դրամական գանձերը, Երևան, 1973, էջ 78-81, *Ն ու լ յ ի Դրամական շրջանառությունը Հայաստանում* (մ. թ. ա. V դ. – մ. թ. XIV դ.), Երևան, 1983, էջ 43-67, P. Z. B e d o u k i a n, Coinage of the Armenian Kingdoms of Sophene and Commagene, Los Angeles, 1985, p. 15-18, 29-31, 36-37, Y. T. N e r c e s s i a n, Armenian Coins and their Values. Los Angeles, 1995, p. 47-101, *Ն ու լ յ ի Դրամական Մասեր*. Los Angeles, 2000, p. 1-206 և այլն (նաև հղված աղբյուրները):

Նախամաշտոցյան Հայաստանում հունարենի կիրառության մասին ամփոփ և գրական-նութային հանգամանալի հղումներով տե՛ս Ա. Մ ո Վ ս ի ս յ ա ն, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 111-163: Չորրորդ դարում Հայաստանում ստեղծված հունալեզու գրականության մասին տե՛ս Լ. Խ ա չ ի կ յ ա ն, Օտարալեզու Հայ դրամականությունը չորրորդ դարում (Ներսես Պարթևի և Եպիփանի նորահայտ «Հարցման» առիթով), ՊԲՀ, 1973, N 3, էջ 27-51 (հղումներով հանգերձ):

¹⁶ Արամեերենի, արամեական դրի ե. դրա տարածման մասին տե՛ս S. S c h i f f e r, Die Aramaer, Leipzig, 1911, A. D u p o n t - S o m m e r, Les arameens, Paris, 1949, R. T. O' C a l l a g h a n, Aram Naharaim, Roma, 1948, p. 93-144, Չ. Լ ո ո լ կ ո տ կ ա, նշվ. աշխ., էջ 114-130, H. J e n s e n, նշվ. աշխ., էջ 281-285, D. D i r i n g e r, նշվ. աշխ., էջ 133-140, Դ. Դ ի ռ ի ն գ եր, նշվ. աշխ., էջ 302-354, Ի. Փ Ր ի Դ Ր ի խ, նշվ. աշխ., էջ 105-108, E. L i p i n s k i, The Arameans: Their ancient history, culture, religion, Leuven-Paris-Sterling, 2000 և գրանցում հղված գրականությունը:

¹⁷ Հայկական լեռնաշխարհի տարածքից Հայտնաբերված արամեագիր հուշարձանների մասին տե՛ս Թ. Լ ա լ ա յ ա ն, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Թերևան, 1931, էջ 97-98, А. Я. Б о р и с о в, Надписи Артаксия (Арташеса), царя Армении. — ВДИ, 1946, N 2, с. 97-107, A. D u p o n t - S o m m e r, Les inscriptions arameennes trouvées près du lac Sévan (Armenie), "Syria", XXV, N 1-2, 1946-1948, p. 53-66, K. B. T p e v e r. Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э. — IV в. н. э.). М.-Л., 1953, с. 162-174, И. М. Д ъ я к о н о в, К. Б. С т а р к о в а. Надписи Артаксия (Арташеса), царя Армении. — ВДИ, 1955, N 2, с. 161-174, Г. А. Т и р а ц я н. Опыт периодизации истории материальной культуры древней Армении. — ВОН, 1957, N 2, с. 82, 105-109, Г. А. Т и р а ц я н, Новонайденная надпись Арташеса I, царя Армении. — ВДИ, 1959, N 1, с. 88-90, А. Г. П е р и х а н я н. Арамейская надпись из Гарни. — ИФЖ, 1964, N 3, с. 123-137, А. Г. П е р и х а н я н. Арамейская надпись из Зангезура. — ИФЖ, 1965, N 4, с. 107-128, И. Н. В и н н и к о в. Об одной арамейской печати в собраниях Государственного Эрмитажа в Ленинграде. Краткие сообщения Института народов Азии. 86, История и филология Ближнего Востока, Семитология, М., 1965, с. 18-19, рис. 1-2, A. P e r i k h a n i a n, Une inscription araméenne du roi Artaches trouvée au Zanguéour (Siwnik). — "Revue des Etudes Arméniennes" (այսուհետ՝ REA), 1966, vol. III, p. 17-29, А. Г. П е р и х а н я н. Арамейская надпись на серебряной чаше из Сисиана. — ИФЖ, 1971, N 3, с. 78-82, A. P e r i k h a n i a n, Les inscriptions du roi Artaches (A propos d'une récente trouvaille épigraphique en Arménie). — REA, vol. VIII, 1971, p. 169-174, A. P e r i k h a n i a n, Inscription araméenne gravée sur une coupe d'argent trouvée à Sisian (Arménie). — REA, vol. VIII, 1971, p. 5-11, pl. I-II, Գ. Կ ա Ր ա խ ա ն յ ա ն, Արամեական նորահայտ երկու արձանագրություններ, ՊԲՀ, 1971, N 3, էջ 274-276, E. L i p i n s k i, Studies in aramaic inscriptions and onomastics, Leuven, 1975, p. 197-208, Գ. Տ ի Ր ա ց յ ա ն, Արտաշես I-ի ևս մեկ նորագույն արամեական արձանագրություն, ՊԲՀ, 1977, N 4, էջ 254-259, Г. А. Т и р а ц я н. Еще одна арамейская надпись Арташеса I, царя Армении. — ВДИ, 1980, N 4, с. 99-104; Б. Н. А р а к е л я н. Арташат I. Основные результаты раскопок 1970-1977 гг. Ереван, 1982, с. 33, табл. XLI, Г. А. Т и р а ц я н. Культура древней Армении VI в. до н. э. - III в. н. э. (по археологическим данным), Ереван, 1988, с. 66, табл. XVI-9, E. K h u r s h u d i a n. A Coin of

Քրիստոնեությունից առաջին կրոն հռչակումից հետո, հունարենին զուգահեռ, քարոզչական նպատակներով Հայաստանում լայն կիրառություն է ստանում ասորերենը¹⁸: Արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում Տրդատ III-ի հրամանով սահմանած հունարենի ու ասորերենի գործածության կարգը խախտվել է խոսրով արքայի գահընկեցությունից (389 թ.) հետո, երբ Արևելյան Հայաստանում արքունի գրագրության մեջ գործածվում է պահլավերենը (միջին պարսկերենը)¹⁹: Թե՛ ասորական և թե՛ պահլավական գրերի հիմքում ընկած է արամեական այբուբենը²⁰:

Հիշատակված հայտնի և հստակ թվագրվող գրահամակարգերից բացի նախամաշտոցյան Հայաստանն ուներ ևս երկու գրահամակարգեր, որոնք շարունակվում են մնալ չվերծանված և իրենց ծագումով ու նշանակությամբ առեղծվածային: Դրանցից մեկը Հայաստանի երկրորդ սեպագիրն է, որը տարբերվում է մինչ օրս աշխարհում հայտնի բոլոր սեպանշանային համակարգերից²¹, իսկ երկրորդն առեղծվածային հսկայանշաններն են²²:

Mitridat, King of Tosp, Oriental Numismatic Society, Newsletter, No. 157, Autumn 1998, p. 8, Э. Х у р ш у д я н. Монета Митридата царя Тоспа. — «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Հ. XVII, Երևան, 1998, էջ 167-174, Ռ. Բ ի շ ի ո ն ե, Հ. Հ ա - կ ո բ յ ա ն, Մ. Հ մ ա յ ա կ յ ա ն, Ն. Պ ա ռ մ ե ջ ի ա ն ի, Արտաշես արքայի նորահայտ սահմանաքարը Սարուխանից, Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր. Գևորգ Տիրացյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ, Երևան, 2001, էջ 79-82, Ժ. Խ ա չ ա տ ը յ ա ն, Ի. Կ ա ռ ա պ ե տ յ ա ն, Ռ. Վ ա ռ դ ա ն յ ա ն, Ի. Կ ա ն ե ց - յ ա ն, Արտաշատի 1998-1999 թթ. պեղումների արդյունքները, Հին Հայաստանի մշակույթը, XII, Հանրապետական գիտական նստաշրջան, Ձեկուցումների հիմնադրույթներ (նվիրվում է ակադ. Բաբկեն Առաքելյանի ծննդյան 90-ամյակին), Երևան, 2002, էջ 51-54, Ն. Հ ա գ ե յ ա ն, Հ. Հ ա կ ո բ յ ա ն, Մ. Հ մ ա յ ա կ յ ա ն, Երկու նոր Արտաշեսյան սահմանաքար Վարդենիկից, Հայաստանի հնագույն մշակույթը, 2, Էմմա Խանգաղյանի հորեյանին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 76-77, Ս. Գ. Հ մ ա յ ա կ - յ ա ն, Արտաշեսյան սահմանաքարերի շուրջ, Հայաստանի հնագույն մշակույթը, 2, Էմմա Խանգաղյանի հորեյանին նվիրված գիտաժողովի նյութեր, էջ 72-76, Ա. Մ ո վ ս ի ս յ ա ն, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 89-108 և այլն (դրականության հղումներով):

Թեպետ Հայաստանից հայտնաբերված արամեատառ արձանագրությունների մեծ մասը համարվում է վերծանված և դրանց հիմամբ արվել են կարևոր եզրակացություններ, այդուհանդերձ, մեր կարծիքով, դրանց ընթերցման շատ հարցեր չի կարելի համարել վերջնականապես պարզված:

¹⁸ Հայաստանում ասորերենի և ասորական գրի գործածության մասին տե՛ս Ա. Մ ո վ - ս ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 164-167 (և հղված գրականությունը): Չորրորդ դարում Հայաստանում ստեղծված ասորալեզու գրականության մասին տե՛ս Լ. Խ ա չ ի կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 27-51:

¹⁹ Դա ակնհայտ է Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու հաղորդումներից: Ըստ Պատմահոր, Մերուստան Արծրունին 360-ական թթ. անհաջող փորձ է արել արգելելու հունարեն գրությունը և հաստատելու պարսկերենը (գիրք Գ, գլ. ԼԶ): Նույն պատմիչի համաձայն պարսկերենը Արևելյան Հայաստանի արքունի գրագրության մեջ գործածվել է Վուսնապուլուցի օրոք (գիրք Գ, գլ. ՄԲ): Ղազար Փարպեցին տեղեկացնում է, որ Հայաստանի բաժանումից անմիջապես հետո, խոսրով արքայի օրոք գեոևս արքունիքում կիրառվում էր հունարենը (գրվագ Ա, գլ. Ժ): Դրանից պետք է եզրակացնել, որ միջին պարսկերենի (պահլավերենի) կիրառությունը Արևելյան Հայաստանում արքունի գրագրության մեջ սկսվել է 389 թվականից հետո:

²⁰ Հայաստանում պահլավերենի (միջին պարսկերենի) և պահլավական գրի գործածության մասին տե՛ս Ա. Մ ո վ ս ի ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 168-169: Տարօրինակ և հատկանշական է այն հանգամանքը, որ մինչ օրս Հայաստանից չի հայտնաբերվել նախամաշտոցյան շրջանի պահլավագիր կամ ասորագիր որևէ առարկա (Նույն տեղում, էջ 164-169):

²¹ Գրահամակարգի մասին տե՛ս Ա. Մ ո վ ս ի ս յ ա ն, նոր սեպագիր այբուբեն (Կարմիր բերդի առեղծվածային սեպագիր արձանագրության շուրջ) — ՊՐՀ, 2001, N 3, էջ 221-226, Ն ու լ յ ի՝ Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 200-208:

²² C. F. L e h m a n n - H a u p t, Armenien Einst und Jetzt, II a, Berlin und Leipzig, 1926, S. 105, Թ ե բ. Լ ա լ ա յ ա ն, նշվ. աշխ., էջ 203, Թ. Թ ո ռ ա մ ա ն յ ա ն, Նյութեր հայկական

Վկայակոչված գրային համակարգերի կիրառմամբ նախամաշտոցյան Հայաստանում ձևավորված գրավոր մշակույթի ու գրային մտածողության արտահայտություններ կարելի է տեսնել ոսկեդարյան դպրության բազմաթիվ տարրերում: Դրանցից առավել ակնառուն հինգերորդ դարում գրական հայերենի մշակվածության բարձր մակարդակն է²³: Ինքնին հասկանալի է, որ դարեր ու հազարամյակներ տևած պետականության ընթացքում Հայաստանում գոյություն է ունեցել վերբարբառային, պետական հաղորդակցության լեզու, որը պիտի հասկանալի լիներ ողջ երկրում (դրանով պետք է հաղորդակցվեին արքունիքի հետ, զորահավաքների ընթացքում, դատական ատյաններում, աշխարհիկ ու հոգևոր դասերի ժողովներում և այլուր): Անհավանական է ենթադրել, թե այդ համընդհանուր հաղորդակցության լեզուն (որը պետք է լիներ երկրի կենտրոնական շրջանի բարբառ-խոսվածքը) գոյություն է ունեցել ու զարգացել միայն խոսակցական մակարդակում առանց գրավոր լեզու լինելու, և անմիջապես դարձել գրաբարի հիմք: Ինչպես նշում է Գ. Բ. Ջահուկյանը՝ «գրական լեզվի բառապաշարը, ինչքան էլ աղքատ լինի, մի քանի, երբեմն մի քանի տասնյակ անգամ գերազանցում է յուրաքանչյուր բարբառի բառապաշար: Բարբառի միջին բառապաշարը սովորաբար հաշվում են 7-8 հազար. գրաբարի մեջ ավանդված բառապաշարը, այն էլ ոչ լիովին հայտնի, անցնում է 60 հազարից»²⁴: Այսինքն՝ գրաբարի բառապաշարը ևս վկայում է հօգուտ հայերենի նախամաշտոցյան շրջանում երկարատև գրավոր մշակման ենթարկված լինելու իրողությունը:

Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր ժառանգությունը կարելի է խմբավորել ըստ մի քանի բնութագրական հատկանիշների:

ճարտարապետության պատմության (Աշխատությունների ժողովածու), Երևան, MCMXLII (=1942), էջ 18-19, O. Belli, Monumentale Felszeichen im Bereich urartaischer Festungsanlagen – “Anadolu Araştırmaları”, 1989, XI, S. 89-105, աղ. I-XVI, N. B a s g e l e n, Atabindi kaya işaretleri. – “Arkeoloji ve Sanat”, 46-49, 1990, p. 24-26, նկ. 1-12, O. Belli, Surveys of Monumental Urartian Rock Signs in East Anatolia. – In: “Istanbul University’s Contributions to Archaeology in Turkey (1932-2000)” (edited by O. Belli), Istanbul, 2001, p. 365-369, V. S e v i n, Urartular’a ait dünyanın en eski Karayolu, “Anadolu Araştırmaları”, 1989, XI, p. 50-51, աղ. IV-2, V-1, Ա. Մ ո վ ս ի ս յ ա ն, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 208-211, ն ու յ ն ի Հայկական մեհենագրություն, էջ 144-147:

²³ Նախամաշտոցյան Հայաստանում հայալեզու դպրության գոյությունն ընդունող և չընդունող գիտնականների առավել ամբողջական ցանկը հայտնած տեսակետներով, տե՛ս Գ. Թ ո խ ա լ թ ե ա ն, Մաշտոցեան տառաձևերի և դրանց ժառանգատեղիք նմանակների աղբյուրների շուրջ. – «Բազմավեպ», 2003, N 1-4, էջ 51-80: Այդ տեսակետների շարքում ուշագրավ մի վարկած առաջ քաշեց Գ. Խ Սարգսյանը, որը մինչ այդ էլ ընդունում էր նախաքրիստոնեական Հայաստանում հայալեզու դպրության հնարավորությունը, անգամ շուրջ 500-ամյա պատմագրական անընդհատ ավանդույթի գոյությունը (տե՛ս Գ. Խ Սարգսյան, նշվ. աշխ., էջ 122-126): Նա կարծում է, որ չորրորդ դարում ևս հայալեզու դպրությունը չի ընդհատվել, այլ արտահայտվել է հետերիոգրաֆիայի եղանակով. վերջինիս համաձայն օտարներից փոխառված դիրք կիրառվում էր բառերի նույն գծագրությունը, սակայն կիրառողներն այն ընթերցում էին ոչ թե տվյալ գիրք ստեղծող ժողովրդի լեզվով, այլ իրենց լեզվի նույնիմաստ բառով (տե՛ս Գ. Խ. Ս a p k u c y a n, К предысторией армянской письменности (նույնը՝ նաև Փրանսերեն). – «Հայ արվեստին նվիրված միջազգային II սիմպոզիում», Երևան, 1978, էջ 1-10): Ուշագրավ այս վարկածը, սակայն, ցայսօր չի հաստատվել չորրորդ դարով թվագրվող հնադիտական որևէ փաստով:

²⁴ Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն, Զրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, 1992, էջ 77-78:

Ըստ ծագման և պատկանելության՝

1. Հայաստանում ստեղծված պատկերագրային համակարգերի հուշարձաններ,

2. օտար ծագում ունեցող, բայց Հայաստանի բնիկների կողմից կիրառված գրային համակարգերի արձանագրություններ (հատուկ ուշադրություն են արժանի դրանց կիրառման տեղական առանձնահատկությունները),

3. Հայաստանի տարածքում հայտնաբերված, սակայն օտարների կողմից ստեղծված գրակիր հուշարձաններ²⁵,

4. առեղծվածային ծագումով և նշանակություններ կոթողներ:

Ըստ գրային համակարգի բնույթի՝

1. բառային,
2. բառավանկային,
3. այբբենական:

Ըստ գրանշանների արտաքին տեսքի՝

1. պատկերանշանային (այդ թվում՝ հիերոգլիֆ),
2. դժանշանային,
3. սեպանշանային,
4. տառային:

Ըստ արձանագրությունների բովանդակության՝

1. արքայական արձանագրություններ՝ նվիրված աստվածների պաշտամունքին,
2. ռազմական արշավանքների նկարագրություններ,
3. թագավորական նախնիներին ձոնված գրակիր կոթողներ,
4. թագավորական իշխանություն և արքայի անձի աստվածացմանը վերաբերող արձանագրություններ,
5. արքայական հիշատակարաններ քաղաքների ու շինությունների (հատկապես՝ սրբավայրերի) հիմնադրման ու բարեկարգման մասին,
6. նոր օրենքներ ու կարգեր սահմանող բնագրեր,
7. արքայական նվիրատվական արձանագրություններ,
8. թագավորական դրամների մակագրություններ,
9. արքայական նամակագրության արձանագրումներ,
10. հոգևոր-պաշտամունքային բազմաբնույթ բնագրեր,
11. ժամանակագրական-օրացուցային արձանագրություններ,
12. ընծայագրեր,
13. բարոյախրատական բովանդակությամբ չափածո ստեղծագործության (ողբերգություն) հատվածներ,
14. պատմական բովանդակությամբ չափածո ստեղծագործության (ողբերգություն) հատվածներ,
15. տապանագրեր (այդ թվում՝ չափածո եղերերգեր),
16. մենանշաններ,
17. դեռևս անհայտ բովանդակությամբ հուշարձաններ²⁶ ...

²⁵ Հայկական լեռնաշխարհի տարբեր հնավայրերից գտնվել են բազմաթիվ գրակիր առարկաներ, որոնք այստեղ են հայտնվել ռազմական, առևտրատնտեսական, մշակութային ու այլաբնույթ հարաբերությունների արդյունքում և չեն կազմում հայաստանյան դպրոցության մասը:

²⁶ Այս դասակարգումը ստացել ենք այսօր վերծանված արձանագրությունների հավաքման արդյունքում: Մյուս արձանագրությունների ասպագայում կատարվելիք վերծանությունը կարող է որոշակի փոփոխություններ մտցնել այս ցանկում:



Նկ. 1. Հայոց դպրության Տիր աստծո արձանը Կոմմագենի Նեմրոս լեռան սրբավայրում



Նկ. 2. Վաղբրոնզեդարյան գաղափարագրեր Եփրատի վերին ավազանից (Ք. ա. 4-3-րդ հազ.)

Նշանների համադրական ցանկ				
Քաղակ	Մեխանոր	Անավեր	Ուտեք	Յապերա

Նկ. 3. Հայաստանի գծային գրանշանների համեմատական ցանկ



Նկ. 4. Բրոնզե պաշտամունքային քիթել՝ Վանի թագավորության մեհենագիր արձանագրությանը: Պատկերված են արբա իշպուհին, թագուհին, արքայազն Մենուան և նրա դաստիարակ-բուրմը, բոլորի գլխավերևում նշված են նրանց անունները (Ք. ա. IX դ.)

ՎԵՐՈՍՆՎԱՅ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՎՈՂ ՆՇԱՆՆԵՐ		
	— Առաջնահայրեն, արքիթ (եղեմախին)	1 —
	— Ղեկնից (?)	2 — 11
	— (Առաջիկ) ստանդարտ	3 — 2 3 4 5 6 7 8 9
	— Տրանսպարտ	4 — 1 2 3 4 5 6 7 8 9
	— Մեծը, Կրկնաթուղ	5 — 2 3 4 5 6 7 8 9
	— Նեմազ Թուր, անձնատեղում	6 — 1 2 3 4 5 6 7 8 9
	— Սեզամ (?)	7 — 1 2 3 4 5 6 7 8 9
	— Բարձր	8 — 1 2 3 4 5 6 7 8 9
	— Մեծ տան, շինարար	9 — 1 2 3 4 5 6 7 8 9
	— Փոր	10 — 1 2 3 4 5 6 7 8 9
	— Քառ: (Չ), ծիր դրոշմ	11 — 1 2 3 4 5 6 7 8 9
	— Վարդ սյծ	12 — 1 2 3 4 5 6 7 8 9
	— Հարստություն, հատկ	13 — 1 2 3 4 5 6 7 8 9
	— Տիկ: Ահարկ (եհարկ)	14 — 1 2 3 4 5 6 7 8 9
	— Սաղմոս: Երանի (տրաշ)	15 — 1 2 3 4 5 6 7 8 9
	— Երանի (տրաշ), = 100- (?)	16 — 1 2 3 4 5 6 7 8 9
	— "Մարտին" (Երանի) նշանաբան	17 — Ազգայնական


Նկ. 5. Վանի թագավորության վերծանված մեհենագրերի ցանկ




Նկ. 6. Խեթալուվիական ծեփեմագիր արձանագրությանը պատկերաքանդակ Մալաթիայից (Ք. ա. XII-XI դդ.)



Նկ. 7. Իշաուիմի արքայի և Սենուա արքայազնի ասուրաբիայական երկնգուկոթողը Քելիշիմում (Ք. ա. IX դ.)



Նկ. 8. Սեպագիր արձանագրություն Այանիս հնավայրից (Վանից արևելք, Ք. ա. VII դ.)




Նկ. 9. Հունարեն արձանագրությունների հատվածներ Արմավիրից (ենթադրվում է, որ դրանք կարող են լինել հատվածներ Սրտավազդ Բ-ի ողբերգություններից)

ΕΝΘΑ ΔΕ ΚΕΙΤΑΙ ΑΙ ΑΡΧΑΙ ΘΗΝΑΙΣ ΗΝ ΠΡΟΤΕ ΓΩ ΓΕ
 ΗΓΓΡΟΜΗΝ ΕΥΝΟΥΝ ΠΡΟΣ ΤΑ ΜΟΝΗΜΕΤΕΡΟΝ
 ΤΑΥΤΗΝ ΟΣ ΠΑΡΕΨΑΝΤ ΕΙΣ ΤΡΩΔΩΝΗΤΙΑ ΛΑΛΩ
 ΑΝΘΕΙΧΟΙ ΕΤΑΙΩΠΑΝΤΑΙ ΣΕ ΠΟΥΡΑΝΙΟΥΣ
 ΕΙΔΑΜΟΣ ΕΛΘΟΥΣ ΤΙΣ ΑΤΑΣ ΒΑΛΑΜΕΡΜΗΡΙΖΩΝ
 ΤΟΥΤΟΝ ΘΕΙΝΑΥΣ ΝΟΥΣ ΠΑΝΤΑΣ ΥΠΟΧΕΙΝΟΥΣ
 ΟΥΡΑΥΣ ΑΕΙΜΑΡΤΗΣ ΠΑΤΡΟΣ ΜΩΝΗΤΙΟΣ
 ΖΩΣΑΝ ΕΠΙΣΤΕΡΦΩΝΣ Ν ΓΑΜΟΝΗΜΕΡΙΩΝ
 ΚΑΝΙΤΖΗΝ ΠΑΤΕΡΘΟΣ ΕΥΣΑΝΟΜΩΝ ΝΟΥ ΠΑΤΡΟΣ ΕΜΕΙΟ
 ΜΗΤΡΟΣ ΤΑΝΤΩΝ ΗΙΣ ΔΟΥΚΙΟΥ ΒΥΓΑΤΕΡΟΣ

Նկ. 10. Հունարեն չափածո եղերերգ-տապանագիր Մալաթիայից (II դ.)



Նկ. 11. Սահմանաքար համարվող արամեատառ քարակոթողներ



Նկ. 12. Նմուշներ առեղծվածային հսկայանշաններից

Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթի հուշարձանները կարելի է խմբավորել նաև ըստ գրանյութի, գրութայան ուղղութայան և այլ հատկանիշների:

Ավարտելուց առաջ անհրաժեշտ ենք համարում մեկ անգամ ևս շեշտել, որ հաղարամյակների ընթացքում Հայկական լեռնաշխարհում ստեղծված գրավոր մշակույթը չէր կարող անհետևանք կորչել, և մաշտոցյան գպրութայան կատարելությունը պայմանավորված էր նաև նախամաշտոցյան շրջանում արմատավորված գրային մտածողությամբ:

Ամփոփելով շարադրված ողջ նյութը՝ տեսնում ենք, որ նախամաշտոցյան Հայաստանում կիրառվել են տասներկու գրային համակարգեր, թողնվել են բազմահաղար արձանագրություններ մայրենի և օտար լեզուներով: Դա ավելի քան խոսուեն վկայությունն է մեր նախնիների գրի ու գրականության նկատմամբ տածած հարգանքի և սիրո, որի պերճախոս ապացույցն է գպրութայան Տիր աստծո պաշտամունքը նախաքրիստոնեական դարաշրջանում: Այդ վերաբերմունքը շարունակվեց նաև հետագայում՝ Մեսրոպ Մաշտոցի ու նրա հանճարեղ ժառանգների սրբացմամբ, ինչի ականատեսն ու վկան ենք այսօր...

ПИСЬМЕННОЕ НАСЛЕДИЕ ДОМАШТОЦЕВСКОЙ АРМЕНИИ

ARTAK MOVSISYAN

Резюме

Письменное наследие домаштоцевской Армении можно разделить на четыре больших группы:

- а) Письменные системы, созданные и используемые в Армянском нагорье:
- Пиктографическое письмо (V – III тыс. до Хр.),
 - Линейное письмо (III – I тыс. до Хр.),
 - Иероглифическое письмо Ванского царства (Бийнили, Урарту, Арарат, IX – VI вв. до Хр.).
- б) Заимствованные письменные системы, используемые в Армянском нагорье:
- Хетго-лувийское иероглифическое письмо (XV – VIII вв. до Хр.),
 - Ассиро-вавилонское клинообразное письмо (IX – VIII вв. до Хр.),
 - Клинообразное письмо Ванского царства (Бийнили, Урарту, Арарат, IX – VI вв. до Хр.),
 - Греческие надписи домаштоцевской Армении (III в. до Хр. – V в.),
 - Надписи домаштоцевской Армении арамейским письмом (II в. до Хр. – II в.),
 - Сирийский алфавит (IV – V вв.),
 - Среднеперсидский алфавит (пехлеви, IV – V вв.).
- в) Надписи, оказавшиеся в Армении в результате сношений с иностранцами.
- г) Загадочные надписи неизвестного происхождения (используемые только в Армянском нагорье).
- Вторая клинообразная система Армении.
 - Загадочные монументальные наскальные знаки.
- Всего, в течение трех тысячелетий в домаштоцевской Армении использованы 5 местных и 7 заимствованных систем письма. Результаты их исследования проливают свет на многие вопросы древней истории и культуры Армянского нагорья.

THE WRITING HERITAGE OF PRE-MASHTOTSIAN ARMENIA

ARTAK MOVSISYAN

Summary

The writing heritage of pre-Mashtotsian Armenia is divided into four large groups:

- a) The created and used writing systems in the Armenian Highland:

- Pictographic script (V–III mill. BC),
 - Linear script (III–I mill. BC),
 - Hieroglyphic script of Van kingdom (Biainili, Urartu, Ararat, the 9th–6th cent. BC).
- b) Loans of writing systems used by the inhabitants of the Armenian Highland:
- Hittite-Luvian hieroglyphic script (the 15th–8th cent. BC),
 - Assyro-Babylonian cuneiform script (the 9th–8th cent. BC),
 - Cuneiform script of the Van kingdom (Biainili, Urartu, Ararat, the 9th–6th cent. BC),
 - Greek inscriptions of pre-Mashtotsian Armenia (the 3rd cent. BC – the 5th cent. AD),
 - Aramaic inscriptions of pre-Mashtotsian Armenia (the 2nd cent. BC – the 2nd cent. AD)
 - Syrian alphabetic script (the 4th cent. – the 5th cent. AD),
 - Middle Persian (Pehlevi) alphabetic script (the 4th cent. – the 5th cent. AD).
- c) Inscriptions found in Armenia in the result of relations with aliens.
- d) Enigmatical inscriptions of unknown origin (used only in the Armenian Highland):
- The second cuneiform system of Armenia,
 - Enigmatic Monumental Rock Signs.

In total, during three millenniums 5 local and 7 imported writing systems are represented in pre-Mashtotsian Armenia. The results of research spread light on the ancient history and culture of the Armenian Highland and on several other issues.